ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ----------

«01» ---------09---------2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

5գ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Աթոյան Նազիկ Ռաֆիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2023- 2024» ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

5 գ դասարանը բաղկացած է 30 աշակերտից՝11 տղա, 19 աղջիկ: Դասարանի ավագն է Գալստյան Նարեն,ով բարեխղճորեն կատարում է իր բոլոր պարտականությունները:Դասարանում չկան առանձնահատուկ ուսուցման կարիք ունեցող աշակերտներ:Աշակերտները միասնական են , հանդուրժող ,համերաշխ: Օգնում են թույլ առաջադիմություն ունեցող աշակերտներին:Դասարանում կան սպորտսմեններ, պարողներ և այլ հետաքրքրություններ ունեցող աշակերտներ:Դասարանի կարգախոսն է<<Բոլորս մի թիմի անդամ ենք>>:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

Կարևորել եկեղեցու դերն ու նշանակությունը ազգապահպանության , ազգային ավանդույթների պահպանման հարցում:Նախատեսվում է անցկացնել աստվածաշնչյան ընթերցումներ, զրույցներ ու քննարկումներ, հետևողական պայքար մղել աղանդների դեմ:Հրավիրել քահանայի:

Գեղագիտական դաստիարակություն- *Խնդիրները՝*

Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:

Գեղագիտական դաստիարկության հիմնական միջոցը երեխայի մշտական հաղորդակցումն է արտաքին միջավայրի և կենցաղի գեղագիտական կողմերի հետ: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ կնպաստի աշակերտի կողմից գեղեցիկի ընկալմանը: Այցելել թանգարաններ,Պատանի Հանդիսատեսի Թատրոն ,Մատենադարան, տարբեր ցուցահանդեսներ, պատկերասրահ, Պանթեոն և այլ պատմամշակույթային վայրեր:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:

Ծնոթացնել տարբեր ժամանակների ազգային հերոսներին։ Իմանալ օրհներգը և վարքը Օրհներգի հնչողության ժամանակ։ Ճանաչել դրոշն ու զինանշանը ։Իմանալ դրանց ստեղծման պատմությունը ։ Կազմակերպել հանդիպումներ պատերազմների մասնակիցների հետ։ Այցելել Եռաբլուր։

Ֆիզիկական դաստիարակություն *Խնդիրները՝*

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:

Համագործակցել ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ, բացահայտել աշակերտների ուժեղ և թույլ կողմեր:Անցկացնել զրույցներ կապված առողջության ,ֆիզիկական դաստիարակության հետ: Զարգացնել արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողություններ:Սովորեցնել ասել ոչ վատ սովորություններին:

Աշխատանքային դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

Զրույցներ անցակցնել արհեստների, տարբեր մասնագիտությունների , դրանց կարևորության մասին: Հաճախել տարբեր ուսումնական կենտրոններ և արտադրամասեր:Ծանոթացնել տարբեր մասնագիտություններին:

Բնապահպանական դաստիարակություն *Խնդիրները՝*

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում

Զրուցել բնության, էկոլոգիայի մասին: Զրուցել տարբեր արտանետումների, դրանց հասցրած վնասների մասին:Կազմակերպել շաբաթօրյակներ: Մաքրել դպրոցի շրջապատը պլաստիկից և պոլիէթիլինից և հանձնել դրանք վերամշակման:

Դպրոց-ընտանիք կապը

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն:

Կապ պահպանել ծնողների հետ, տեղեկացնել emis.am կայքի մասին :Ծնողներին տեղեկացնել էլեկտրոնային օրագրի մասին:Անհրաժեշտության դեպքում այցելել խնդիր ունեցող աշակերտների տուն, զրուցել խնամակալների հետ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
Չորեքշաբթի	7-րդ ժամ		

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Ողջույն դպրոց. Գիտելիքի և դպրության օր	06. 09. 23	
II	Իմ իրավունքներն ու պարտականությունները դպրոցում	13. 09. 23.	
III	Ազնիվ և անկեղծ հարաբերություններ մեր դասարանում	20. 09. 23	
IV	Ես զավակն եմ իմ անկախ երկրի	27. 09. 23	
V	Իմ երկիրը երեկ, այսօր, վաղը	04. 10. 23	
VI	Լավ ուսուցիչն իմ պատկերացմամբ	11. 10. 23	
VII	Երևանն իմ տունն է	18. 10. 23	
VIII	Ի՞նչ եմ ուզում դառնալ	01. 11. 23	
IX	Ինչպե՞ս պայքարել անտարբերության դեմ	08. 11. 23	
X	Աշխատանքը ազնվացնում է մարդուն	15. 11. 23	
XI	Ովքե՞ր են պատերազմ հրահրողները	22. 11. 23	
XII	Քաղաքավարության կանոնները	29. 11. 23	

XIII	Սպիտակի երկրաշարժ	06. 12. 23	
XIV	Ի՞նչ գիտեմ առողջության մասին	13. 12. 23	
XV	Ինչպե՞ս հաղթահարել ծուլությունը	20. 12. 23	
XVI	Իմ սիրելի զբաղմունքը	10. 01. 24	
XVII	Մարդ ,որին կուզեի նմանվել. Իմ սիրելի մարդիկ	17. 01. 24	
XVIII	Համակարգչի դերն իմ կյանքում	24. 01. 24	
XIX	Հպարտ եմ քեզնով Հայ Զինվոր	31. 01. 24	
XX	Ես և օրենքը	7. 02. 24	
XXI	Մարդու ինքնուրույնությունը. Ինչպե՞ս է արտահայտվում	14. 02. 24	
XXII	Ընթերցանությունը իմ կյանքում. Գրքերը իմ կյանքում	21. 02. 24	
XXIII	Իմ կատարած լավ գործերը	28. 02. 24	
XXIV	Կարողանում եմ արդյո՞ք սիրել	06. 03. 24	
XXV	Համակարգիչն իմ ընկերն է՞ ,թէ՞ . . .	13. 03. 24	
XXVI	Ուժի, փառքի և անմահության մասին	20. 03. 24	
XXVII	Ժպիտն ու ծիծաղը մեր կյանքում	3. 04. 24	
XXVIII	Մայրս իմ կյանքում	10. 04. 24.	
XXIX	Գնահատիր ժամանակը	17. 04. 24	
XXX	Հայ ժողովրդի անցած ուղղին	24. 04. 24	
XXXI	Ճշմարտությունը կարող է ցավեցնել,բայց. . . .	01. 05. 24	
XXXII	Հայաստանը պատմության քառուղիներում	08. 05. 24	
XXXIII	Արդարացի և անարդարացի արարքներ	15. 05. 24	
XXXIV	Դպրոցական հաճելի հուշեր	22. 05. 24	